

բեն թէ՝ իւր անհերետ նասորերդութեան  
պատճառաւ կայրիեան մը ընկերուիւնութեանը  
անկարգութիւններով վրտոված լինի, բայց առ-  
բա պատճառը հեղինակը չէ, այլ նոյն  
ինքն ընկերուկանութիւնը, որց պէտք է  
վերագրել թատերական ներկայացման  
մը հետեւող վերահաս անկարգոււ-  
թիւնները : Մէք այն ֆրանսացի խիստ  
կենսագրին պիտի պատասխանեմք, որ  
կը սխալի երբ կը պնդէ, « Թէ այս  
ութատրերգութեան նախագաղափառ  
» որ քաղաքակրթութեան դէմ նաև  
» խատինք մ' է . վասն զի նորա նպաւ  
» տակն է մատնանիշ առնել ազնիւ և  
» առաքինի հսդի մը, որ ընկերակա-  
» նութեան մէջ չը կարենալով տեղ մը  
» գտնել, մեղադարա ընկերութեան մը  
» գիրկը կը գիմէ, վասն զի նորա նը.  
» պատակն է ընկերականութիւնը ա-  
» ւազակաց այրի մը դէմ յանդիման  
» կացուցանել և բոլոր առաւելութիւ-  
» նը վերջնոյն տալ ու :

Նախագաղափարը գժբաղդաբար ընկերականութեան մի մասին ամենա-  
ճշգրիտ ծրագրին է, 187 գարու ինք-  
նամարտ ապականեալ ազնուականու-  
թիւնն է : Ֆրանսուա ար Մօր երի-  
տասարդ կոմսը տպականութեան եւ  
անարգութեան տիպն է . բայց այն  
թագուն տպականութեան, որ օրինաց  
ապաստանելով անպատիժ կը մնար :  
Դարձ որ Մօր, թէեւ իւր եղբօրմէն  
նուազ անառակ, խիստ հեռի է աղի-  
ւառաշինի հոգի մը լինել . խիզախ երի-  
տասարդ մ' է նաև յանդուգն աղաս-  
որդի մը, որ զինքն հսկայ մը կը կարծէ,  
այն ինչ թզուկ մ' է, որ անդործութիւ-  
անառակութեան մէջ գահավլմած է  
և այժմ յափրացեալ, յագեալ և իւր  
անարգութեանէն ամօթապարտ՝ սխա-  
լանքն աղատօրէն քաւելու բաւակա-  
նաչափ առաքինութիւն չունենալով՝  
իւր անառակութեան ընկերակիցներէն

կը ձգի եւ աւազակապիւ կը լինի .  
Ուրեմն ընկերականութիւնը սա-աղիաց այրի մը  
թէմ յանդիման թրուած չէ, այլ թագոււն  
մոլութիւնը՝ յայտնի մալութեան, Եթէ  
առաւելութիւնը վերջնոյն արուած է,  
այն է պատճառը, որ նուազ կեղծա-  
ւոր է : « Իցիւ թէ, կը գոչէ մի և նոյն  
ու կենապիրը, սցն գործողութիւնը  
ու անկարգ գարու մը մէջ տեղի ունե-  
ու ցած լինէր, այլ ոչ, նոյն խի մեր ո-  
որերուն մէջ, մեր զգօն ընկերակա-  
նութեան մէջ է, որ հեղինակը իւր  
ու երեւակացութեան ազդեցութեան  
ու հետեւելով՝ գրութեամբ մը (syste-  
մաтиquement) տղմի և արեան մէջ կը  
ութաւալի : Անդ կեղծիք և ապակա-  
նութիւն կայ ու :

Պէտք է մարդ ազնուապետական  
սաստիկ սէր տածէ իւր սրտին խորը,  
որպէս զի անցեալ գարու այս ապական-  
եալ և բորոտ աղնուականութիւնը սցն  
օրինակ պաշտպանէ : Անտարակիցս մեր  
օրերուն մէջ ոչ ոք պիտի համարձակի  
1782 ի ընկերական կորգաց և բարուց  
պաշտպան հանդիսանալ, այն կեղծիք  
և ապականութիւն կայ . բայց ոչ թէ  
հեղինակին երեւակայութեան մէջ .  
այլ զրական կենաց մէջ, աղատորդւոց  
շնանակաց մէջ, որք գեղերեսեալ և  
անուշահստութիւններով օծուած տրդ  
մի և գայսի մէջ կը թաւալէին . . . .  
Արդարեւ անդ կեղծիք և միանդամայն  
ապականութիւն կայ :

( Կարուհակել : )



## Պ.Ս.Ս.Ո.Խ.Ա.Ն

Մանդուկ պատուական լրագրոց  
3291 թուցն մէջ Հրաչյաց ստորագրու-  
թեամբ և Տիգրանակերտէն գրուած  
մի նամակ տեսնուեցաւ, որ Արդիու-  
ս . Աստուածածնի և Մակարացիցւոց

ամենահայեաց Ա . Աստուածածնի վարչութեան հօրեից վերայ խօսելէն զինի , որպէս թէ ակնարկի մի եւս Ա . Աթոռոյս ՚ի Տիգրանակերտ ունեցած կալուածոց վերայ կը ձգէ և շատ ցաւալի գրութեան մէջ կը գտնէ , որովհետեւ ըստ ամենագէտՊարոնին Միապետի մը յանձնուած են եղեր , որ շնուածը կը շնէ , վլածն կը փլի , օրինաւոր կալուածներ ըն ըստ հաջոյս կը վաճառէ . և որովհետեւ Ա . Պատրիարքը քը զսպեր յիշեալ անձը , որ է Մինասեան Յովհաննէս էֆենտին . կը մակաբերուի , որ յիշեալին հետ կամակից ըլլայ . առքել նոր տրամաբանութիւն . մորդ ծայրադոյն յիմար ըլլալու է , որ չէթէ խօսի կամգրէ , այլ մորէն անդում անցընէ , թէ տան տէր մը իւր տան կրծանու մը կը նիւթէ . ապուշ ըլլալու է , որ ըսէ թէ տան մը գլաւուորը , հայրը , իւր զաւոկաց ձեռքէն իրենց օրապահիկ հացն յափառակէ . Այս կարգի յիմարաբանութիւն մի է Պ . Նամակութի մակաբերութիւնը , որ իրը թէ Ա . Աթոռոյս Ամեն . Ա . Պատրիարքը կարծեցեալ միապետներու կամսկից է Ա . Աթոռոյս կալուածները փձացնելու մասին :

Մէր գիտեմք թէ սոյն թշնամոկ անտեխարկութիւններն ինչ աղքիւրէ ծընունդ առած են . գիտեմք թէ ինչ է այդ գրէլ տուաղներուն փորուն ցաւը . սակայն ՚ի զուր կը թշնամոնեն , և ՚ի զուր կ'անուանարկէն . քը ողիտի հասնին իրենց անձնագարար նպատակին . կ'առզեն որ իրենց յանձնուի կալուածոց տեսչութիւնը , որպէս զի ուզանին ընեն , ինչպէս ներկայ Մէծ . Գործակլէն առաջ եղողները . բայց չկատարուելու երազներ են , ինչ որ կ'երեւակ այեն : Զէինք գրէր այսպահիք , եթէ այդ թշնամութիւններն առանց մամուռոներու ոլսուույն դպչելու

ուզգակի Ա . Աթոռոյս Վարչութեան ուզգաւած լինէին . վասն զի Ա . Աթոռոյս Վարչութիւնը իւր գործերը կարգադրելու և անոնց մասին տնօրէնութիւնները ընելու համար , մասնաւուրաց խորհրդին և կարծեաց պէտք չունի . նա գիտէ ինչ որ կը գործէ և կը տնօրինէ : Բայց որովհետեւ գրովին գլխաւոր նպատակը եղած է անուածնարկելով Մինասեան Յովհաննէս է ֆէնտին վշտացնել , որպէս զի իւր հաւատարմաբար ըրած ծառայութեանէն ձեռնթափ լինի , որ սուա Աթոռուսէրները իրենց հաճոյից և կրկց լոյն տապարէզ գտննեն . ուստի ՚ի միամը տութիւնընթերցող հասարակութեան պարագ կը համարիմք ըսել , որ Ա . Աթոռոյս կառավարութիւնը լու և մատէն կը ճանաչէ յիշեալ Մէծ . էֆէնտին , քան նամակութիրը . կը ճանաչէ համայն Միաբանութիւնը նորա Ա . Աթոռույս մատուցած հաւատարմաբար և անձնուիրաբար ծառայութիւնը . միշտ գոհ և շնորհակալ է , որ նորա այսպիսի ծառայութիւն մի յանձն առնելովը՝ Ա . Աթոռոյս կալուածները ազատւցան իսպառ կարսուելու երկիւզէն , շնորհակալ է , որ ըստ ամենայնի Միաբանութեան կամքը ՚ի գործ կը գնէ պէտք եղուններն շնուել տալով և փլածներն նորոգելով : Ինչ որ ըսուած է Մէծ . Յովհաննէս էֆէնտին վերայ իւր ներկայ ծառայութեան մասին , լոկ մախանաց և անձնական թըշնամութեանց արդիւնք են : Մէծ միայն այս ցաւ եղած է , որ մինչեւ ցարդ Ա . Աթոռույս վարչութիւնը այլ և այլ գմուարութեանց պատճառաւ լը կարաց իւր գոհունակութիւնը գործնականապէս յայտնել Մէծ . էֆէնտին :

